

տարուած է Վանանդ եւ պահուած Ս. Խաչի վանքին մէջ: Պատմութեան ծիրը այսպէս կը դառնայ. Նունէ Վրաց «առաջնորդը» կը կազմէ փայտեայ մեծ խաչ մը, զոր կ'օրհնէ եւ կը կանգնէ Մծխիթայ քաղաքի դիմաց բարձրացող լեռան վրայ: Վերջը ընդունելով քրիստոնէութիւնը մեծ յարգութեամբ կը պատուէին այս Խաչը: Ս. Շուշանիկ երբ վախճանելու վրայ էր, կը յանձնարարէ Տարօնէն իրեն եկած Անդրէաս վանական երէցին, որ Ս. Խաչը Տարօն տանի եւ Մամիկոնեաններու յանձնէ, որպէս զի Պարսիկներու ձեռքը չի յնայ եւ չանպատուի: Անդրէաս կը յաջողի գաղտագողի փախցնել Ս. Խաչը. ուրիշ նշխարներու հետ կը տանի Հոռոմէական սահման, Պարսար լեռան վրայ անմատոյց այր մը: Կը լսէ թէ Վանանդ կը գտնուի Հմայեակ Մամիկոնեանի որդին Գրիգոր իր գորագունդով: Լուր կու տայ անոր Անդրէաս, թէ իր քովն է Ս. Նշանը: Գրիգոր կը հասնի հոն եւ կ'առնէ Ս. Խաչը եւ կը տանի կը դնէ Կապուտայ բերդը: Ապա, Ձենոն կայսեր օրով, Ս. Խաչը կը փոխադրուի Կարս, ուր կը շինուի Ս. Խաչ անուն վանք մը:

Ա. զբիւրն եր: Ինքնին կը խոստովանի Ահարոն, թէ «բազում աշխատութեամբ եւ խուզիւ քննելով» հանած է այս Պատմութիւնը «ի բազում մատենից Հայոց եւ Վրաց»: Յանունէ կը յիշէ հետեւեալ աղբիւրները.

ա. Ա. գ ա թ ա ն գ ե ղ ո ս: Նունէի Վրաստան գալն եւ Ս. Խաչի կանգնուելը, ինչպէս եւ Մորուսէոյն քարոզութիւնը պատմելէ ետքը կը գրէ. «Չայս մինչեւ ցայս վայր յԱզաթանդեղայ պատմագրէ»: Այս նախադասութիւնը Մ. Խորենացի չըջած է. «Որպէս ուսուցանէ քեզ Ազաթանդեղոսի մէջ այս մասին որ եւ է խօսք չկայ: Բայց կը տեսնուի թէ ծանօթ է Ահարոն այդ գրքին, ուսկից առած է Հովհաննիսի անունը եւ Գրիգորի մեհեաններ կործանելն եւ խաչեր կանգնելը:

2. Վ կ ա յ ու թ իւ ն Ս. Շ ու շ ա ն կ ա ն: Հասած է մեզի այս վկայութիւնը⁹, թէ հայերէն եւ թէ վրացերէն: քայց չկայ հոն ալ-

նարկութիւն «Նունէի Ս. Խաչի» մասին, քայց կ'ըսուի թէ «գայր եղբայր բղէշխի Չոլիկ եւ երկրպագէր Սուրբ Նշանին, որ առաջի Տիկնոջն» (էջ 44): Թէպէտ պահուած է մեզի այս վկայութիւնը, սակայն կայ հիմ ենթադրելու թէ կար աւելի ամբողջական մը, զոր ունեցած է Ահարոն իր ձեռքին տակ: Այսպէս այժմեան վկայութիւնը երբ կը յիշէ Յուրտաւի եպիսկոպոսը՝ «եպիսկոպոսն ոչ պատահէր ի ժամուն յայնմիկ ի տանն Բղեշխին» (էջ 15, 21 եւն), չի տար անոր անունը. քայց Ահարոն կը կոչէ յանունէ. «Իսկ Ափոց եպիսկոպոս Դրանն արքունի». որ այլուտ ալ վկայուած է. Կիւրիոն երբ կը թուէ եպիսկոպոսները «որ ի Յուրտաւ լեալ են ի Ս. Շուշանիկն եւ այսր», կը յիշէ առաջիններէն՝ «Ափոց, Գառնիկ, Մահակ» եւ այլն¹⁰:

3. Վ ա ռ ք Ս. Ս ա հ ա կ ա յ: «Եւ ի վարուց Ս. Սահակայ»: Հաւանօրէն Ղազար փարպեցոյ Պատմութիւնը կ'ակնարկուի, ուսկից քաղած կ'երեւայ տեղեկութիւնները Հայաստանի աղէտներու նկատմամբ:

4. «Եւ ի ճղնաւորէն Անդրէասու»: Բնագիրը հոս «եւ» շաղկապը չունի, եւ կրնայ իմացուիլ նաեւ, թէ Անդրէաս գրած ըլլայ Ս. Սահակի վարքը, քայց աւելի հաւանական է ենթադրել, թէ Անդրէաս գրած ըլլայ Ս. Խաչի փոխադրութեան պատմութիւնը: Կ'ըսուի թէ սա էր «սնեալ առ ոտս Ս. Սահակայ» եւ «եկեալ էր զկնի տիկնոջն (Շուշանիկն) յաշխարհէն Մամիկոնեանց, վանական ի Ղազարու վանաց, ի յերկրէն Տարօնոյ» «եւ յաւերմանէն Հայոց անդր (ի Յուրտաւ) հասեալ խաղաղեալ կայր»: «Աւերուին Հայոց» անշուշտ 451—454 տարիներու դէպքերը կ'ակնարկէ, երբ ստուգել խնայուեցաւ Յուրտաւ: Անդրէաս իրրեւ Դրան երէց «զերիս որդիս եւ զմի դուստր Բղեշխին», այսինքն Վաղգէնի, «կնքեալ էր եւ որդիացուցեալ»: Վկայութեան մէջ կը յիշուին Շուշանիկէն երեք մանչ եւ մէկ աղջիկ զաւակ (էջ 13). Թերեւս Անդրէաս ըլլայ այն «մի ոմն ի քահանայից», որ պաշտպան կանգնեցաւ Ս. Շուշանիկն եւ այս պատճառաւ ընդունեցաւ Բղեշխին հարուածներ (էջ 34): Այս ճղնաւորին՝ «սրբոյն Անդրէասու ասացեալ» հատուածը ցոյց կու տայ, թէ Ահարոն ձեռքի տակ գրաւոր աւանդութիւն մ'ունէր Ս. Խաչի մասին որ սակայն Ս. Նունէի Խաչը չէր,

⁹ Վկայարանութիւնը հրատարակուած է Սոփիքը հայկականը. հատոր Թ. (Վենետիկ 1853) էջ 10—47: Գեղեցիկ ուսումնասիրութիւն մը նուիրած է վկայարանութեան P. Peeters, Sainte Sousanik, martyre en Arméno-Géorgie († 14e décembre 482—484): Analecta Bollandiana 53 (1935) 5—48, 245—307, ուր եւ տուած է վկայարանութեան լատիններէն թարգմանութիւնը:

¹⁰ Գրքը Թղթոց, էջ 178:

այլ Ս. Շուշանիկն «Նշանը»: Այս մասին պիտի խօսիմ առանձինն:

5. Վ կ ա յ ա բ ա ն ու թ իւ ն Ս. Հ մ ա յ ե կ ի եւ Բ ա ո ա ս ու ն ա բ ա ն ց ն: «Գտի, կ'ըսէ, եւ զսրբոյն Հմայեակի զՎկայարանութիւնն Խ. արամբք ի տանն Տայոց, որ այժմ Բառասնի վանք կոչի»: Գիտենք Ղ. Փարպեցիէն, որ Հմայեակ Մամիկոնեան, եղբայրն Կարմիր Վարդանի, 450ին ուղարկուեցաւ ուրիշներու հետ դեսպան առ Թէոդոս Բ. խնդրելու օգնութիւն Յաղկերտ Բ. ի դէմ: Թէոդոս վախճանեցաւ 450, Յուլիս 2. իսկ Մարկիանոս անկարելի համարեցաւ Հայոց խնդրքը: Հմայեակ վերադարձին պատսպարուեցաւ Պարսար լեռան ամրոցներու մէջ. Տայոց Որջնահաղ գիւղին մօտ ընդհարուելով Պարսից հետ, «անդ զկատարելութեան պսակն ընդունէր երանելի սեպուհն Հմայեակ» իր ընկերներով (էջ 74): Փարպեցի կը յիշէ Հմայեակի զաւակներէն Վասակ, Վասակ, Արտաշէս եւ Վարդ: Գրիգորի յիշատակութիւնը, զոր կ'ընէ Ահարոն, ուրիշ կողմէ վկայ չունի: Բայց ծանօթ է մեզի Կորդուր Վասակի որդին, ուստի թոռն Հմայեակի. կը պատմէ Ղ. Փարպեցի, թէ Պերոզի մահէն ետքը զահ բարձրացաւ իր եղբայրն Վաղարշ, որուն դէմ ելաւ Պերոզի որդին Չարեհ. արքայական բանակին օգնութիւն ուղարկեց Վահան իր հեծելազօրէն թեամբ. «ընդ որս կազմեալ արձակէր եւ զիւր եղբորորդի մի, զորդին նահատակին Վասակայ զԳրիգոր...: Անդ քաջացեալ Հայրանման սեպուհն Մամիկոնից Գրիգոր, ցուցեալ մեծ քաջութիւն... եւ հռչակեալ նորա լաւութեան անուն՝ հասանէր մինչեւ ի Թաղաւորն Վաղարշ»: Չարեհ կը պարտուի (Փարպ. էջ 171—172):

Ի՞նչ աղբիւրէ քաղած է Ահարոն Գրիգորի մասին անդրագոյն տեղեկութիւնները: Յիշուած Վկայարանութեանն: Նիկողայոս Մառ Աթոսի մէջ երեւան բերած է վրացերէն լեզուով «Վկայարանութիւն Ս. Վարդանայ եւ եղբոր նորա Հմայեակի, Վահանայ, Սահակայ եւ ձևի վկայիցն»: Այս վկայարանու թեան բնագիրը, որ կապ ունի Եղիշէի Ե. թեան բնագիրը, որ կապ ունի Եղիշէի Ե. թեան խաչի վրայ գրուած լինի, որովհետեւ Ե. թեան վրայ գրուած է «Եղիշէ պէտք է այդ վկայարանութիւնից օգտուած լինի, որովհետեւ Ե. թեան վրայ գրուած է այս վկայարանութիւնը»:

Թեան խօսքերով է սկսում»: Վրացերէնը հայերէնէ թարգմանուած է¹¹:

6. «Գտի եւ այլ բազում յիշատակ սրբոց, որոց մոռացօնք եղեալ ի տագնապ լինելոյ աշխարհիս»: Հ. Ալիշան այս տողերէն կը հետեւցնէ թէութեամբ. «Թերեւս եւ հաւաքելով այդ սրբոց յիշատակները, ինքը Ահարոն այլ գիրք մի ձեւացուցած ըլլայ¹²»: Յամենայն դէպս մեզի չէ հասած ան:

7. Ս ո կ ը ա տ ի Ե կ ե ղ ե ց ա կ ա ն Պ ա տ մ ու թ իւ ն: Կա՛մ ուղղակի եւ կա՛մ անուղղակի ծանօթ է Ահարոն Սոկրատի Պատմութեան Ա. 20 գլխուն: Այս մասին յետոյ:


8. Կը գրէր Ահարոն, թէ բացի հայկական աղբիւրներէ օգտուած է նաեւ վրացերէն գրքերէ. անոնց անունը չի տար: Առանց տարակուսի ունէր Ահարոն ձեռքի տակ վրացերէն Ս. Նունէի վարք մը:

Նունէի Ս. Խաչը: Ահարոն կը զանազանէ Շուշանիկի Ս. Նշան եւ Նունէի Ս. Խաչ: Առաջնոյն վկայարանութեան մէջ կ'ըսուէր. Չոլիկ, Վաղգէն բղէշխի եղբայրը «գայր... եւ երկրպագէր Ս. Նշանին, որ առաջի տիկնոջն Շուշանիկն» (էջ 44): Թէ ի՞նչ «Ս. Նշան» էր այն, չէ բացատրուած. եւ հարկ է կարծել թէ վաղուց հետէ անոր քով գտնուած, անյայտ ծագումէ Ս. Խաչ մ'էր:

Ս. Նունէի խաչը, ինչպէս Ահարոն կը հաւատէ, եւ ինչպէս Ս. Նունէի Վարքին մէջ կը պատմուի, կանգնուած էր Մծխիթայ քաղաքին հանդէպ, բարձր բլուրի մը վրայ: Ահարոն աչքի առաջ ունեցած է հոս Ս. Նունէի վարքը նախնական խմբագրութեամբ, որ Մծխիթայի յիշեալ Խաչը վերագրուած էր Նունէի:

Այս Խաչը, սակայն, ծանօթ էր ի հնուց իրրեւ «Ս. Խաչ Մծխիթայի»: 608ին այդ խաչը դեռ իր տեղն էր. այս տարւոյն Հայոց Աբրահամ կաթողիկոս կը գրէր Վրաց Կիւրիոն կաթողիկոսին, թէ Հայք եւ Վերջ սովոր էին «աստի ի Մծխիթայի ի Խաչն եւ այտի ի Ս. Կաթողիկէ» Վաղարշապատի երթելու ժամանակ ուխտագնացութեամբ¹³: Նոյն տարւոյն կը գրէր նմանապէս Կիւրիոն կաթողիկոս Սմբատ Վրկան մարզպանին (ի Գուրն). «Առ մեզ խափանեցէք զալ եւ եր-

¹¹ Изъ поѣздки на Афонъ. 4-й том. УРЛУС, 1899, էջ 209:
¹² Հայապատմ., էջ 78—79:
¹³ Գրքը Թղթոց, էջ 104:



կիր պազանել պատուական եւ կենսատու սրբոյ Խաչիս Մծխիթայի, յորմէ խնդրելով պարզեցար հօր եւ մօր քում. եւ սորա առաջի սնար եւ սորա առաջնորդութեամբ ի բարի հասեր: Թէպէտ եւ դուք չեկիք յերկրպագել, այլ մեք յամենայն ժամ յաղօթս յիշեմք առաջի սրբոյ Խաչիս... եւ արժանի լինիջիք ի մօտէ առուրս դալ եւ երկրպագել Ս. Խաչիս¹⁴: Նոյն Կիւրիոն կը գրէր դարձեալ Արրահամ կաթողիկոսին. «Ազատ մարդիկն որ ի Հայոց ի Վերս խնամութիւն արարեալ ի սրբոյ Շուշանկայ պաշտօնն դային եւ ի Ս. Խաչս Մծխիթայ աղօթել եւ Օրինաց հաղորդէին¹⁵»: Իսկ Արրահամ կաթողիկոս իր Շրջաբերականին մէջ կ'արգելէր. «Մի' աղօթիւք երթալով ի Խաչն որ զՄծխիթայի տեղեօքն համբաւի, մի' ի Մանգլեաց Խաչն եւ մի ի մեր եկեղեցիս զնոսա ընդունել¹⁶»:

Բացի Մծխիթայի եւ Մանգլեաց Խաչերէ կը յիշուի նաեւ Վարժիոյ Ս. Խաչը, որուն համար կ'ըսուի թէ Ս. Մաշտոց կանգնած ըլլայ (անդ, էջ 534):

Մօտաւորապէս Թ. դարու սկիզբը խրճարագրուած Աշխարհացոյցը գեռ անձանօթ է «Ս. Նունէի Խաչին», կ'ըսուի թէ Արագոսի գետը «անցանէ ընդ մէջ Մցիսիթայ քաղաքի եւ Բլրոյ սուրբ Խաչին (եւ) իջանէ ի Կուր¹⁷»:

Թ. դարէն վերջը, երբ Նունէի Վարժը հրապարակ ելաւ, ինչպէս Ահարոն եւ Մ. Խորենացի, նաեւ Վրաց Տարեգիրքը Մծխիթայի այդ Ս. Խաչը կ'անուանեն «Սաչ Նունայ». այսպէս կը կարդանք նոյն Տարեգրքին մէջ. «Յաւուրս Գէորգայ (Թաղաւորին Աբխազաց 921—955) եկն Սաջոբ ամիրայն եւ այրեաց զՄցիսիթա եւ գերեաց զԽաչն Նունայ՝ կոտորատեալ. եւ եղեւ ի նոսա ախտ սեմբորի. եւ գիտացին թէ ի Խաչն է պատուհասն. եւ ժողովեալ զհատեալ մասունսն եւ լցին յամանս եւ կանգնեցին ի տեղեօջ իւրում¹⁸»: Ասկէ առնելով յիշած է զէպօս նաեւ Միսիթար Այրիվանեցի. «Սաջոբ ամիրայն էսո զՄծխիթայ եւ կոտորեաց զԽաչն Նունեայ¹⁹»:

Հակառակ այս աղաղակող վկայութիւններու Ահարոն կը պատմէ թէ «երանելի այրն Անդրէաս ջանայր զսուրբ Նշանն Նունէի գերծուցանել ի նախատանաց անօրէն այլազգեացն», այս ինքն Պարսիկներու, որոնք թերեւս Վաղգէնէն դրուած կարող էին անօրինիլ հանդէպ Խաչին: «Եւ սուրբ տիկինն Շուշանիկ աղաչէր զԱնդրէաս, զի փութանակի առցէ զսուրբ Նշանն Նունէի եւ զայլ եւս բազում ոսկերս սրբոցն՝ ի սրբոյն Գրիգորէ առ նա (Ս. Շուշանիկ) հասեալն շխարքըն եւ սպասք եկեղեցեաց եւ բազում խաչեր»: Հնազանդելով Տիկինոջ կամքին՝ Անդրէաս «երթեալ բազանայր զԽաչն Նունէի ի Բլրէն... Իսկ Ջոջիկ, եղբայրն Բղեշխին օգնական լինէր Տիկինոջն եւ Անդրէասու... եւ յղարկէր յԱրեւմուտս կոյս»: Խաչ մը, որ կանգնած էր Բլուրին վրայ, տեսանելի Մըծխիթայէն, անշուշտ քանի մը կանգուն ըլլալու էր. ի՞նչպէս Անդրէաս կրցաւ զայն ամփոփել եւ փախցնել մինչեւ Պարսար լեռը: Աւելորդ են սակայն այսպիսի խորհրդածութիւններ, վասն զի Ս. Խաչը դեռ երկար ժամանակ կանգուն մնացած է իր տեղը: Զրոյցին շարունակութիւնը, Խաչին փոխադրութիւնը Վանանդ եւ այլն կարող են ընթերցողներս կարդալ անձամբ:

Անդրէաս յարմար չգտնելով վայրը, «առեալ զԽաչն Նունէի եւ բնակեցաւ ի Սպեր դաւառի, ի խորշ մի լերինն Պարսարու: Եւ կացեալ անդ ամս եւթն, մինչեւ լուաւ զվախճանն սրբոյն Շուշանկանն²⁰»: Ս. Շուշանիկ ըստ վկայութեան, 7 տարի տառապեցաւ եւ վախճանեցաւ 482—484ին: Այս հաշուով Անդրէաս կ'մ ուշ լսեց Սրբուհոյն մահը, եւ կ'ամ Յուրտաւէն մեկնեցաւ նա Վաղգէնի ուրացութենէն անմիջապէս ետքը. բայց այս զէպօքն ականատես եղած պիտի չըլլար Շուշանիկի տառապանքներուն: Աւելի համապատասխան պիտի ըլլար ժամանակի հանգամանքներուն, եթէ կարդանք «մինչեւ լուաւ զվախճանն անօրիկն վազգէնի»: Ղ. Փարպեցի (էջ 118) կը գրէր. «Լինէր յանկարծակի խոտովութիւն յուզմանց յաշխարհին

²⁰ Վիեննայի Միսիթ. Մատենադարանի Թ. 90, թղ. 13ա. կ'ըսուի թէ Սաջուէլ կաթողիկոսի (510—521) օրով Թոնդրակեցիք «չխաչն կանգնեալ ի վերայ լերինն Պարսար (Պարսարս) յաւուր նոր Կիրակիի յանդուզն յարձակմամբ խորտակեցին» (Հմմտ. Տաշեան, Յուցակ, էջ 358): Զ. դարուն գոյութիւն չունէին «Թոնդրակեցիք»:

¹⁴ Անդ, 171:
¹⁵ Անդ, 178:
¹⁶ Անդ, 194:
¹⁷ Աշխարհացոյց, հրատ. Մուքրեան, էջ 28:
¹⁸ Պատմութիւն Վրաց, էջ 108: Բառն Սեմբոր (նաեւ Սեմփոր) կարգա՝ Սիմփոր. յն. symphora, symphora. Հմմտ. Աճառեան, Արմատական Բառարան, բ. բ. Սեմփոր:
¹⁹ Միսիթար Այրիվանեցի, ժամանակագրութիւն, էջ 69, զետեղած է ընդ մէջ 841—851 տարիներու:

Վրաց. Վախթանգ սպանանէր զԲղեշխն զանօրէնն Վաղգէն յամի ԻՆ. Պերոզի արքայի»: Պերոզի Թաղաւորութեան ԻՆ. տարին է 482—483: Ուստի Ս. Շուշանկան մահը պատահած ըլլալու էր այս թուականէն ոչ շատ յառաջ:

Անդրէաս այժմ իմանալով որ Գրիգոր Մամիկոնեան, Հմայակի որդին «բռնացեալ ունէր... զամուրս կապուտայ լերինն եւ զձորն Երասխայ եւ զՓոքր Բասեան, որ այժմ կոչի Վանանդ, եւ զփոքր ամրոցն Կարենեաց», լուր կը հասցնէ Գրիգորի, որ իր քովը կը գտնուին Ս. Խաչն եւ այլ մասունքներ, եւ կը խնդրէ որ անյապաղ դայ եւ գտնէ զինքը: Գրիգոր կը փութայ հասնիլ ժամադրաւայրը: «Եւ երանելի առն ծերոյն բազալ զքանձս աստուածայինս՝ աւանդեաց Գրիգորոյ զամենայն. զի էր այրն մերձի վախճանել»: Կ'օրհնէ Գրիգոր եւ իր աշխարհը. «Եւ աւանդեաց զհոգին»: Գրիգոր կը վերադառնայ իր աշխարհը: Այս տեղի կ'ուսենայ Լեւոն Ա. կայսեր (457—474) օրով: Ուստի անմիաբան են զէպօքերը ուղիղ ժամանակագրութեան:

Թէոփոսու գորավար: Պատմութեան շարունակութեան մէջ (§ 3) կ'ըսուի, թէ երբ յոյն զօրքը, որ կը նստէր Կարին-Թէոփոսուպոլիս, կը լսէ թէ Գրիգոր Մամիկոնեան մտած է հոռոմէական սահման եւ Ս. Խաչը առած է Վանանդ, անմիջապէս կը հետատարած է Վանանդ, անմիջապէս կը հեռուանէ զինքը. «Հասին ի Վանանդ փոքր կուրծնէ զինքը. «Հասին ի Վանանդ փոքր կը չեցեալ»: Գրիգոր սակաւաձեռն գունդով կը յարձակի անոնց վրայ եւ փախստական կ'ընէ: Անոնց զօրավարն էր Թէոփոսու (Թորոս), որ զօրութեամբ Ս. Նշանին կը կուրծնայ, եւ որ զօրութեամբ Ս. Նշանին կը կուրծնէ: Վերադառնալով կը կնքէ Գրիգորի հետ: Վերջինս դեսպան կ'ուղարկէ «առ Լեւոն կայսր մեծ Հռոմայեցոց եւ զգագուցանէ նմա զհետո աշխարհիս եւ զիւր դալն ի նորա աշխարհն», այսինքն կը բացատրէ, թէ ինչ նպատակով մտած եւ ելած է Հռոմէական սահման: Իր կարգին Թէոփոսու ալ կայսեր թոյլտուութիւնը կը խնդրէ, որ երթայ Փոքր Վանանդ Ս. Խաչին յուրտ եւ գտնէ աչքին բժշկութիւնը:

Թէոփոսու անուն Արեւելքի սպարապետ մը կը յիշուի 486ին, զոր Ջենոն կայսր պաշտօնագրով կ'ընէ նոյն տարւոյն յԱնտիոք

տեղի ունեցած Հրէից կոտորածի պատճառաւ²¹:

Երկու հառակոտորներ ինի ժամանակագրութեան մը: Ահարոն այս պատմութեան կը կցէ, թերեւս իբրեւ ժամանակակից զէպօքեր, երկու ժամանակագրական հատակոտորներ (§ 4), որոնք յունարէնէ հայերէն թարգմանուած ժամանակագրութենէ մը փրցուած հանուած կ'երեւան:

ա. «Իսկ յամենայն աւուրս սին լուսոյ նման փողոյ երեւեալ յաւուրս քառասուն»:

Այս տեղիքը կը գտնեմ Թէոփոսուէսի ժամանակագրութեան մէջ յամն աշխարհի 5958, որ է Փրկչական 476 տարին²². Τοῦτο τῷ ἔτει στυμεῖον ἐφάνη ἐν τῷ οὐρανῷ. νεφέλη ὠσπερ σάλπιγγος ἐκτύπωμα ἔγουσα ἐπὶ ἡμέρας μ' καὶ ἑσπέρας, այն է. «Յայսմ ամի նշան երեւեցաւ յերկինս. ամպ որ ունէր զձեւ փողոյ յաւուրս քառասուն ընդ երեկս»:

բ. «Ի նմին ժամու առաւ Հոռոմ քաղաք ի Վաղենտինացոց զաւրաց: Եւ սաստիկ պատերազմունք եղեալ եւ բազումք մեռան սպանմամբ յաւուրսն յայնստիկ»:

Թէ ի՞նչ աղբիւրէ անուած է տեղիքս, չեմ կրնար մատնանշել. բայց կը հայի Գերման Ողոսկրի արշաւանքին յիտալիա, որ 476ին տիրեց Հռոմի եւ վերջ տուաւ Հռոմէական կայսրութեան: Ողոսկր զօրավարն էր Դանուրի հարաւակողմերը նստող զերմաէր վարձկան զօրքին, որ կը բաղկանար Սկիրրացի, Հերուլացի, Տիւրկիլինդացի եւ այլ ցեղերէ: Հիները գասնեք սովոր էին հաւաքական ձայնով կոչել Գոթացիներ (Գոթք, մերոնց քով Գունդք), Սկիւթացիներ, ի վերջոյ նաեւ Վանդալացիներ: Կը համարիմ թէ վերջիններս կ'ակնարկեն բնագրիս «Վաղենտինացիք», որ աղաւաղուած կ'երեւայ²³:

Սուրբ Խաչն ի Փոքր Վանանդ (§ 5): Գրիգոր Մամիկոնեանի ընդհարումը Բուզանդական զօրքի հետ տեղի ունեցած էր Փոքր Վանանդի մէջ, զոր «հրամայէր (Գրի-

²¹ Joannis Malalae chronographia, p. 389 ed. Bonnae. Michel le Syrien, Chronique, II, p. 151 ed. Chabot, Le Beau, Histoire de Bas-Empire, I. XXXVI, 49.
²² Theophanis chronographia, p. 177 ed. Bonn.
²³ Հմմտ. Theophanes, p. 203. Le-Beau, անդ, I. XXXV, 51. Հ. Գաթրըճեան, Տիւրկական Պատմութիւն, Բ. Վիեննա 1852, էջ 456:

ծագեաց լոյս տպաւորութեամբ խաչին ըստ
 ձեւոյ եւ ըստ չափոյ փայտեղինին. եւ կալով
 ի վերայ նորա երկոտասան աստեղաւք: Յոր
 հաւատացեալ երկրպագեցին նմա: Եւ յայնմ
 50 հետէ զաւրութիւնք եւ բժշկութիւնք ոչ սա-
 կաւ կատարէին ի ձեռն սրբոյ Նշանին:

Չայս մինչեւ ցայս վայր յԱզաթանդեղայ
 պատմագրէ ուսաք:

2. Սրբոյն Անդրէասու ասացեալ: Իսկ
 Ափոց եպիսկոպոս զբանն արքունի եւ Ան-
 դրէաս վանական, որ զերիս որդիս եւ զմի
 դուստր Բրեչիսին կնքեալ էր եւ որդիացու-
 5 ցեալ, այր երկիւղած յԱստուծոյ, որ եկեալ էր
 զկնի Տիկնոջն յաշխարհէն Մամիկոնեաց, վա-
 նական ի Ղազարու վանաց, ի յերկրէն Տա-
 րաւնոյ. եւ ինքն խարաղնազգեստ եւ բոկա-
 զնաց եղեալ, սնեալ առ ոտս սրբոյն Սահակայ.
 10 եւ յաւերմանէն Հայոց անդ հասեալ՝ խաղա-
 ղեալ կայր: Քանզի բազում կործանումն էր
 հասեալ աշխարհիս Հայոց, յառ եւ յաւար, ի
 սով եւ ի գերութիւն մատնեալ ի Պարսից:
 15 Եւ նախարարք Հայոց սպառեալ էին. եւ
 Յոյնք ոչ փախտեան տեղի տային զերեացն
 Հայոց. եւ ամուրք ոչ պահէին զտաղնա-
 պեալսն. զի աստուածասաստ էր բարկու-
 20 թիւնն: Եւ զինչ եւս ասացից զբազում նե-
 դութիւնս եւ զաղէտս տարակուսանաց աշ-
 խարհիս Հայոց: Այլ դարձայց անդրէն ի
 կարգս իմոյ պատմութեանս:

Իսկ երանելի այրն Անդրէաս Չանայր
 զսուրբ Նշանն Նունէի զերծուցանել ի նախա-
 տանաց անաւրէն այլազգեացն: Եւ սուրբ տի-
 25 կինն Շուշանիկ աղաչէր զԱնդրէաս, զի փու-
 թանակի առցէ զսուրբ Նշանն Նունէի եւ զայլ
 եւս բազում ոսկերս սրբոցն՝ ի սրբոյն Գրի-
 գորէ առ նա հասեալ նշխարքն՝ եւ սպասս
 եկեղեցեաց եւ բազում խաչեր: Չայն ամե-
 30 նայն առեալ եւ երթեալ բառնայր զԽաչն
 Նունէի ի բլրէն: Քանզի եկեալ մոզք տագ-
 նապէին զտունն տուն կրակի կացուցանել:
 Իսկ Ձոջիկ, եղբայր Բրեչիսին, աւղնական լի-
 նէր տիկնոջն եւ Անդրէասու. եւ սպիտակա-
 35 փառ զարդուք զարգարէր զսուրբ Նշանն եւ
 բառնայր ի սպիտակ ջորիս եւ ի ձիս եւ յղար-
 կէր յարեւմուտս կոյս:

Իադարէր յամուրս ինչպէս: Իսկ
 սուրբն Անդրէաս ոչ հաւանեաց դադարել ի

մէջ ամբոխին: Առեալ զԽաչն Նունէի եւ 40
 բնակեցաւ ի Սպեր գաւառի ի խորշ մի լե-
 րինն Պարխարու: Եւ կացեալ անդ ամս եւթն,
 մինչեւ լուաւ զվաղճանն սրբոյն Շուշանիկանն:
 Ապա այնուհետեւ ի տարակոյս եղեալ տագ-
 45 նապէր, եթէ զինչ արասցէ զսուրբ Նշանն
 Նունէի եւ զայլ ոսկերս սրբոցն:

Յայնժամ յարուցեալ տեղեկանայր ի
 տունն Մամիկոնէից, եթէ ո՞ր արգեաւք իցէ
 կենդանի. եւ ոչ զոք յընտանի նախարարացն
 զտանէր: Ապա զտեալ զոմն մանուկ, որդի 50
 Հմայեկի, եղբոր Վարդանայ, անուն Գրի-
 գոր, որ բունացեալ ունէր մանուկն զամուրս
 Կապուտայ լերինն եւ զՁորն Երասխայ եւ
 զՓոքր Բասեան, որ այժմ կոչի Վանանդ, եւ
 զԻրոք ամրոցն Կարնենեաց: Չայս իմացեալ 55
 Անդրէասու՝ ուրախ եղեւ յոյժ: Ապա յղէ
 առ նա զմի յաշակերտաց իւրոց եւ զգացու-
 ցանէ նմա զամենայն:

Իսկ երանելի մանուկն Գրիգոր ուրախա-
 ցաւ յոյժ. եւ համարեալ զգաւրս իւր առն եւ 60
 ձիոյ երեք հազարաց: Ոչ զանդիտեալ ի զաւ-
 րացն Յունաց, որք կային ի Թէոդոսուպաւ-
 լիս, այլ առիւծաբար յարձակեալ ընդ մուտ
 ձորոցն Տայոց, պատճառելով զիւր հաւրն
 Հմայեկի զնշխարս զտանել, եւ անցեալ ի 65
 յամուրսն Պարխարու՝ հանդիպի իւրում տեն-
 չանացն: Եւ երանելի առն ծերոյն բացեալ
 զզանձս աստուածայինս՝ աւանդեաց Գրիգո-
 րոյ զամենայն: Չի էր այրն մերձ ի վախճա-
 70 նել: Եւ համարձեալ զձեռս իւր աւրհնեաց
 զնա եւ զաշխարհ նորա. եւ աղաչէր զԳրի-
 գոր աստուածապաշտութեամբ եւ հայրենի
 ուղղութեամբ կալ: Եւ ինքն փառս տուեալ
 Աստուծոյ՝ աւանդեաց զհոգին. զի էր այր
 ծերացեալ եւ անցեալ ժամանակաւք եւ բա- 75
 զում վիշտս յաղաղս կործանման աշխարհիս
 Հայոց կրեալ:

3. Իսկ Գրիգորի առեալ զսուրբ Նշանն եւ
 զամենայն նշխարսն՝ փութով զառնայր յիւր
 աշխարհն: Ապա զաւրացն Յունաց տեղեկա-
 ցեալ մի ըստ միով՝ հասին ի Վանանդ
 Փոքրն կոչեցեալ: Յայնժամ քաջին Գրիգորի 5
 կարգացեալ զսուրբ Նշանն Նունէի՝ զտեղի
 առեալ զմարտի եւ ընդդիմանայր զաւրացն
 Յունաց. զի զաւրն Յունաց բազում էր. ոչ
 զանդիտացեալ նորա ի բազմութենէն, այլ
 առնաբար յարձակեալ՝ սակաւութիւն զբազումս 10

50 յետէ: — 52 ցայն... յագաթանդեղայ:
 2. 13 չաւի ի (պարսից): — 17 աստուածասատ:
 — 21 իմո: — 28 սպաս: — 31 մոզք: — 34 անդրիասու:

53 երասխա: — 56 անդրիասու:

փախտական առնէր: Քանզի Նշանն սուրբ
 ինչին փայլատակածեւ եղեալ զմարտու-
 ցեալսն խաւարեալ կուրացուցանէր. մանա-
 ցեալսն խաւարեալ կուրացուցանէր. մանա-
 15 անուն Թէոդորոս ճանաչիւր: Եւ նորա յեր-
 կիր անգեալ՝ աղաչէր զԳրիգոր եւ ինդրէր
 զխաղաղութիւն եւ զառողջութիւն բժշկու-
 թեան: Եւ նորա ոչ առեալ յանձն առանց կայ-
 սեր, այլ զխաղաղութիւն համոզեալ՝ յղարկէ
 20 զնոսա: Յայնժամ հրամայէր կոչել զՓոքր
 Վանանդ՝ Կարմիր Փորակ: Եւ ինքն եւ իւրքն
 ամենայն եկեալ հասին յամուրս Կապուտայ
 լերինն:

Ապա յայնժամ զեսպանս արձակէ Գրի-
 25 գոր առ Լեւոն կայսր մեծ Հռոմայեցոց եւ
 զղացուցանէ նմա զաղէտս աշխարհիս եւ զիւր
 զղացուցանէ նմա զաղէտս աշխարհիս եւ զիւր
 գալն ի նորա աշխարհն. քանզի բազում քրատս
 արարեալ էր զօրացն Յունաց: Եւ հրամայեաց
 թաղաւորն զաւրաւարին Թէոդորոսի գնալ
 30 սու սուրբ Նշանն Քրիստոսի եւ զբժշկութիւն
 ընդունել ի նմանէ: Իսկ զաւրաւարին եկեալ
 բազում ընձայիւք եւ խոնարհութեամբ ան-
 գեալ առաջի սրբոյ Նշանին եւ արտասուա-
 գեալ հառաչմամբ խնդրէր զխաղաղութիւն (եւ
 35 զառողջութիւն) բժշկութեան: Եւ ի նմին ժա-
 մու խաւարեալ աչք նորա բժշկեցան եւ լու-
 զանայր խաղաղութեամբ յաշխարհն իւր եւ
 փառս Ամենատեանն մատուցանէր:

4. Իսկ յամենայն աւուրս սիւն լուսոյ
 նման փողոյ երեւեալ յաւուրս քառասուն:
 Եւ ի նմին ժամու առաւ Հռոմ քաղաք ի վա-
 4 ղեմտիանացոց զաւրաց: Եւ սաստիկ պատե-
 րազմութեւք եղեալ եւ բազումք մեռան սպան-
 մամբ յաւուրսն յայնոսիկ:

5. Իսկ Գրիգոր որդի Հմայեկի, եղբայր
 Վարդանայ, խաղաղացեալ ամս բազումս խըն-
 նէր ուխտ եկեղեցեաց սրբոց. բազում խըն-
 դութեամբ եւ ուրախութեամբ նուէրս կա-
 5 տարէր: Եւ լինէր տուն սրբոյ Նշանին ի
 տանն եւ չորսն սեպտեմբերի ամսոյ. քանզի
 տանն աւուր հանգեաւ Խաչն Նունէի ի Կա-
 պուտ ամրոցին: Եւ լինէր ոչ սակաւ բժշկու-
 10 կողմանց բազում հիւանդք եւ բժշկէին յա-
 մենայն ախտից իւրեանց. եւ զիւրհասարք ա-
 ողջանային եւ այսոց չարաց հալածումն
 լինէր զաւրութեամբ սուրբ Նշանին. եւ ա-

նունն Աստուծոյ փառաւորէր ի մէջ հաւատա-
 ցելոց իւրոց: 15

6. Իսկ ի ժամանակս արեգակնային երկ-
 րորդ եղանակին հասելոյ ի կէտ ամարայնոյ
 ի[սկ] Սորաձորն Արշարունեաց սաստիկ ջեր-
 մամբ. եւ բազում ուխտականք գային ի կող-
 մանց կողմանց, կիսամեռք լինէին ի ջեր-
 5 մութենէն. այլ ի զաւրութենէ հրաշիցն զան-
 ցեալ վիշտսն մոռանային: Եւ ջերմութեանն
 ոչ հանդուրժեալ սպասաւորքն սրբոյ Նշանին:

7. Իսկ ի շինել աշխարհիս Հայոց եւ ի
 վախճանել Լեւոնի կայսեր եւ ի թագաւորելն
 Չենոնի կայսեր, անկասկած եղեալ Հայք՝
 փոխեն զԽաչն ի Վանանդ, մաւտ առ ամրո-
 ցին Կարնենեաց ըստ հիւսուսի Ախուրեան 5
 զետոյն յարեւելից, որ անուանի Խաչի վանք
 եւ սրբոյ Նշանին Վանանդայ սուրբ Խաչ: զի
 մոռացումն լինիցի հնոյն: Եւ արս ճգնաւորս
 միանձանց դասուց, որ սպասաւորէին սրբոյ
 Նշանին. եւ զտեղին անուանեն Խաչի վանք.
 10 եւ չորջ զնովաւ գեաւաք եւ աղարախք երկո-
 տասանք սպասաւորեն նմա: Չայս բարե-
 պաշտ ոմն ի տոհմիցն Բագրատունեաց
 ընձայս պարգեւեաց սրբոյ Նշանին եւ ի ծա-
 15 ոայութիւն կրանաւորաց, որ բնակեալ են ի
 ուայութիւն կրանաւորաց, որ բնակեալ են ի
 իսկ վանքն ի յանդարար փառաբանու-
 թեան: Եւ առաւել քան զառաւել զարանային
 զասք պաշտանէից. եւ չնորհք բժշկութեան
 եւ խաղաղութեան աշխարհիս Հայոց եւ
 20 եւ խաղաղութեան աշխարհիս Հայոց եւ
 սոսր չարաց հալածումն լինէր ի սուրբ
 Նշանէն Քրիստոսի. եւ բազումք բժշկէին ի
 նմանէ:

8. Եւ այսպէս ձգեալ գայր հասանէր
 մինչեւ ի սպառումն Մամիկոնեան ազգին,
 զոր այժմ Տարան կոչեն: Եւ տիրէ Հայոց
 տոհմ Բագրատունեաց: Եւ ի բունակալու-
 5 թենէ հարաւային զաւրացն բազում տանջանք
 եհաս ի ժամանակին յայնմիկ:

Եհաս ոմն ի զաւրացն հարաւոյ ոստիկան,
 այր չար եւ անաւրէն եւ բազմահար, որում
 անուն կոչիւր Սպքի: Որոյ եկեալ յաշխարհս
 Հայոց եւ տեսեալ զուխտ եկեղեցեացն պայ-
 1 ձառացեալ եւ զղասս պաշտանէից եւ զհոյլս
 կրանաւորաց բազմացեալ եւ զսպասաւորու-
 թիւն տէրունական խորհրդեանն: Խանդա-
 ցեալ ընդ իրսն եւ մրմուռեալ իբրեւ զբազան
 վայրենի, յարձակեալ իբրեւ զչարագեւս, 15

3. 14 զաւրաւար: — 26 նմայ: — 29 Թէոդորոսի:
 4. 3 վաղեմախանացոց:
 5. 2 խաղացեալ: — 12 յայսոց:

6. 1 ժամանակ... յերկրորդ եղանակն:
 7. 20 յայսոց:
 8. 13 տերունական:

զուգահեռ անցանել. ունել —, ընկալեալ —, եկաց —, կեալ — եւ այլն: Պաշտել զԱստուածն... խոստանայր. այսպէս նաեւ խոստանայր լինել բարեխօս, — դառնալ, — տալ, — առնել, — հաստատել, եւ այլն: «Որում հանդիպեալ», յունարան ասութիւն մըն է հայերէնի մէջ, մուտ գտած յն. շՅԴՂՁՁ (սեռականով) բայէն որուն իմաստն է, հասնիլ նպատակին, վիճակիլ, ընդունիլ, գտնել եւ այլն, իտրենացի ուրիշ տեղեր ալ գործածած է բայս նոյն իմաստներով. «Հանդիպի ամենայն խնդրոցն եւ խոստմանցն» (Գ. 48), բազմաց յինէն հանդիպեցիս բարութեանց (Գ. 34), «եւ ոչ հանդիպեցայ ընդունելութեան» (Գ. 57) «Թէ սրպէս հանդիպեցան հաւատոց (Կոստանդիանոս Բ. 83) եւ այլն: Շատ սիրելի է իտրենացոյ «կատալի» զինդիւրն, — զկամս, — զհայցուածս, — զհրաման, — զսուգ» եւ այլն:

Սովորաւոր նկարագրութիւնը եկեղեցւոյ շինութեան եւ սիւնի մը կանգնումի մասին զանց ըրած է Մովսէս յիշատակել, վասն զի ընդարձակ տեղ տուած էր Ս. Խաչի կանգնումի պատմութեան, զոր չունէր Սովորաւոր: Այս նկատողութիւնները կը յանգին հետեւեալ եզրակացութեանց.

1. Ահարոն երէց, վանական մը վանանդի Ս. Խաչ վանքին, գրած է Նունէի խաչի Պատմութիւնը 825—850 տարիներու մէջ, միջին հաշուով 830—840:
2. Գրած է զայն ցոյց տալու համար, թէ վանանդի Ս. Խաչը Նունէի Ս. Խաչն է, որ երբեմն Մծիխիթայի Ս. Խաչ կը կոչուէր:
3. Ահարոն երէց ծանօթ էր հայ եւ վրացի գրականութեան:
4. Ունեցած է իր ձեռքին տակ ա. հայերէն Ազգաթանգեղոս (ուղղակի կամ անուղղակի). Բ. Սովորաւոր Եկեղեցական Պատմութիւնը (ուղղակի կամ անուղղակի). Գ. Վրացերէն Ս. Նունէի վարքը:
5. Այս վարքը խմբագրուած էր վրացացի մը, որ կարգացած էր հայերէն Ազգաթանգեղոսն եւ հայերէն Սովորաւոր:
6. Այս վարքը գրուած էր յանուն «Ազգաթանգեղոս պատմագրի». եւ այս Ազգաթանգեղոսն է Ահարոնի ակնարկած համանուն աղբիւրը:
7. Վրացերէն բնագրի մը հետքերն են ա. «առաջնորդ վրաց», որ թարգմանութիւնն է վրացերէն *eristavi* բառին: Բ. «Նախագահ քաղաք», ուր առաջնորդը կամ աղ-

գապետը իր նախադասութեան աթոռն ունի: Գ. խանթ (խանթի) մայր փայտ, որ վրացերէն բառ կ'երեւայ (Չուրինովի Բառագրքին մէջ կը պակսի): Գ. Նունի փոխ. Նունէ:

8. Մովսէս իտրենացի կարգացած է Ահարոնի այս գրուածքը եւ առած է անկէ բառ առ բառ Նունէի վարքը եւ Ս. Խաչի Պատմութիւնը:

9. Մ. իտրենացի օգտուած է Մ. Սովորաւորն. ասկէ է Բ. 65ի վերջին պարբերութիւնն եւ որսորդութեան միջնադէպը:

10. Այն հատածներու մէջ, զորոնք բանաբարած է Մ. իտրենացի Ահարոնէն, լեզուն եւ ոճը օտար են իտրենացոյ:

11. Այն յաւելուածներու մէջ, որոնք կը գտնուին միայն Մ. իտրենացոյ քով, լեզուն եւ ոճը ճշդիւ կը համապատասխանեն Մ. իտրենացոյ հայկաբանութեան:

12. Այս ամէնէն կը հետեւի, թէ Մովսէս իտրենացի գրած է իր Հայոց Պատմութիւնը 825—840էն վերջը:

Ե. ՄՈՎՍԵՍ ՊԱՏՄԱԳՐԻ ԵՒ ԱՀԱՐՈՆ

Յովհաննէս Քորեպիսկոպոս, որ կը յիշուի 726ի Մանագիւրտի ժողովին մէջ, պատմած է մանրամասնօրէն վարագայ Ս. Խաչի երեւումը: Կը հաղորդէ հոս ի մէջ այլոց, թէ Թողիկ ճգնաւոր «երթեալ բնակէր ի կատարս լեւինն վարագայ»: Սա «առեալ զգիտութիւն յառաջագոյն վասն Գալստեան Ս. Խաչին, տասնօրեայ աւուրբք աղօթէր առ Աստուած չըրկիլ ի խոստացելոց պարզեացն»: Երբ կը լրանայ տասներորդ օրը «լինէր բարբառ ինչ ահագին սատիկ յոյժ... ի բուն կատար լեւինն տեսանէր գունդս հրեշտակաց լուսափայլս, զի կային երգելով քաղցրահնչիւն ձայնիւ զիւրեանց փառաբանութիւնսն: Եւ ապա զկնի նոցա երեւեալ Խաչն ամենագոր եւ սաստիկ լուսով լցեալ լեռանն ամենայն»: Ոչ միայն Թողիկ եւ իր աշակերտը Յովէլ ակնատես կ'ըլլան այս երեւոյթին, այլ եւ լեռան ստորտը գտնուող զիւղացիք: «Եւ ի նմին ժամանակի ել լուրն ընդ ամենայն երկիրն Հայոց աշխարհին մինչեւ ի սահմանս վրաց եւ Աղուանից. եւ ապա զիմեալ գային աշխարհ ամենայն յիւրաբանչիւր տեղեաց...: Յայնմ աւուր լինէին նշանք մեծամեծք ի ձեռն սրբոյ Խաչին՝ այսահարաց, անդամալուծից, գոսացելոց եւ

ամենայն ցաւազնոտաց¹: Այս կը պատահի իբր 660ին:

Նոյն դէպքի մասին ունինք ուրիշ գրուածք մ'ալ «Յաղագս սրբոյ Նշանին որ է վարագ, նորին Մովսիսի պատմագրի ասացեալ», որ կը սկսի «Ընդ ժամանակս հայրապետութեանն տեսուն Ներսիսի եւ վարագ պատրկի Ռչտունեաց...»: պահուած հետեւեալ ձեռագիրներու մէջ. Վիեննա, Մխիթ. Թ. 2, Թղ. 218—220ա (Տաշեան, Յուլիան, էջ 11), Երուսաղէմ, Խապայեան ցուցակ, Թ. 1, Գ. 136—137բ: Վենետիկ, Մխիթ. Թ. 200, Թղ. 527—529ա (1224. անանուն. Սարգիսեան, Յուլիան Բ. 32): Մագաղաթեայ հատակոտոր մը՝ Հանդէս Ամսօրեայ 28 (1914) 663—666:

Խաչի երեւման պատմութիւնը ընդհանուր գծերով նոյն է Յովհաննէս Քորեպիսկոպոսի հաղորդած տեղեկութիւններու հետ: Առանց տարակուսի Մովսէս իրեն աղբիւր ունէր գտնոնք: Այս տեղ ոճը ճառական է եւ ունէր գտնոնք: Այս տեղ ոճը ճառական է եւ ունէր գտնոնք: Այս տեղ ոճը ճառական է եւ ունէր գտնոնք՝ պատկերաւոր: Կան տեղեկութիւններ, որոնք աչքի զարնող նմանութիւններ կ'ընծայեն Ահարոնի (ուստի նաեւ Մովսէս իտրենացոյ) Ս. Նունէի Խաչի Պատմութեան հետ: Այս նմանութեան գծերը երեւան թեան հետ: Այս նմանութեան իսկ: Կը կու գան ձառին սկզբնաւորութեան իսկ: Կը պատմէ Մովսէս Պատմագրի, թէ Ս. Հովիփ սիմեանց նահատակութեանէն ետքը ոմանք «յրկնկերաց սրբոց Հովիփսիմեանցն, որ յետ կատարման նոցա փախուցեալք... եկեալ բնակեցան ի լեւինն վարագ»: Յետ ժամանակաց նոյն լեռը կը բարձրանայ նաեւ Թողիկ իր արբանեակին՝ Յովէլի հետ ճգնելու: Թողիկ բարեպաշտ զգածուած տարուած փափաք կ'ունենայ տեսնել փրկչական Ս. Խաչը: Պատմուածքին շարունակութեան մէջ մեզի համար կարեւոր են հետեւեալ տողերը, զորոնք դէմ առ դէմ կը ներկայացնեն Ահարոնի համապատասխան տեղիքին հետ:

Մովսէս: Ահարոն:

Այլ որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր եւ աղօթից նոցա լսէ, յանկարծակի լինէր բարբառ ինչ: Եւ ծագեաց լոյս երեւմամբ Խաչին ի դաշար (var. ի բարձր տեղ) լեւինն ի վերայ վերին՝ ըստ ձեռնի եւ ըստ բոյ. եւ լցեալ լեռան ամենայն ցաւազնոտաց ի ձեռն սրբոյ Նշանին: Եւ ըստ բոյ. եւ լցեալ լեռան ամենայն ցաւազնոտաց ի ձեռն սրբոյ Նշանին:

¹ Հայապատում, էջ 230:

չափոյ փայտեղիքին. լեռնէր լոյսն հանդերձ երկուստամ լուսաւորոցն, որ պէս յետոյ ստուգեցաւ տեսիլն, եւ լեռան լի եղիւ ամուշահոտութեամբ. եւ ծայն երկնաւոր զուրթնոցն (var. զօրացն), որ երգէին քաղցրաձայնութեամբ եւ օրհնէին զԱստուած... եւ օրհնութիւնք զուրթնոցն լսելի եղեալ... եւ յարուցեալք երկրպագեցին սրբոյ Նշանին...: Եւ բազում բժշկութիւնք լինէին ի ձեռն սրբոյ Նշանին:

«Մովսէս Պատմագրի» ժամանակը ծանօթ չէ մեզի: Բայց ան քանի որ իր Պատմութեան նիւթ ընտրած է 660ին տեղի ունեցած դէպք մը, հարկ է որ այս թուականին կամ անկէ ետքը պարտաւ ըլլայ: Իր ձեռքին տակ կը գտնենք Յովհաննէս Քորեպիսկոպոսի կը գտնենք Յովհաննէս Քորեպիսկոպոսի գրուածքը, գրուած հաւանօրէն է. դարու վերջին կամ Ը. դարու առաջին քառորդին: Ուստի Մովսէս աւելի ուշ ժամանակի հեղինակ եղած ըլլալու է: Ուշադիր զննութիւնը համեմատութեան գրուած երկու բնագիրներու կը բերէ զմեզ այն համոզման, թէ Մովսէս ուղղակի Ահարոնէն կախում ունի. իտրենացոյ «բուրմամբ անուշահոտութեան» կը պակսի Մովսէսի բնագրին մէջ, նոյնպէս «քաղցրաձայնութեամբ» աւելի Ահարոնի «քաղցրութեամբ ձայնիւ» ասութեան մօտ է քան իտրենացոյ «քաղցր յոյժ»ի: Թէ ստուգելու Ահարոնէն կը բանաբար Մովսէս, կը մատնէ «փայտեղիքին» բառը, որովհետեւ ոչ Յովհաննէս Քորեպիսկոպոս եւ ոչ ալ Մովսէս Պատմագրի որ եւ է ակնարկութիւն չէին ըրած «փայտեղիքին» Խաչի գոյութեան մասին: Նոյնպէս «լինէր լոյսն հանդերձ երկուստամ լուսաւորոցն» անծանօթ է Յովհաննէսին: Ինձ կը թուի թէ «որպէս յետոյ ստուգեցաւ տեսիլն» նախադասութիւնը կցուած է այս հատուածին, հաւատացնել տալու համար, թէ Յովհաննէսի լուսութիւնը այս կէտի մէջ արդիւնքն է անոր կամխա գրած ըլլալուն:

Մովսէսի Ահարոնէն կախում ունենալը կարելի է ապացոյց ծառայել անոր 825—850էն ետքը գրած ըլլալուն: Յամենայն դէպս նա յառաջ էր քան այն Մովսէս, որ հեղինակ եղած է «Պատմութիւն Ս. Հովիփսիմեանց» գրուածքին, որ կը պատմէ Հովիփսիմեանց ուղեգնացութիւնը Հոռոմէն — Վաղարշա-

